# ԴԱՍԱԳԻՐՔ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

---

Հայկական Եկեղեցական ձայնագրութիւնը ընդփոյթ ընդհանրացնելոյ և արդիւնաւորելոյ համար՝ Պ. Նիկողայոս Թաշճեանց քաջահմուտ ձայնագրագէտ դասատուն պատրաստեց այս դասագիրքը, որ կարի փորձառու կանոնօք և դիւրահասկանալի եղանակով յօրինուած է։

Գինն է յիսուն կոպ։

---

ՀԱՄԱՌՕՏ ՁԵՌՆԱՐԿ

## ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ

---

Պ. Մակար Տէր Սարգսեանց Հայոց դպրոցաց և ուսումնարանաց համար կարևոր եղած գծագրութեան արուեստի վերաբերեալ առաջնապտուղ այս Ձեռնարկը պատրաստելով՝ հանդերձ գծագրութեան պատկերօք և օրինակօք՝ ոչ սակաւ դիւրութիւն կընծայէ թէ դասատուաց և թէ դասառուաց, և արժանի է քաջալերութեան, որպէս զի աշխատասիրողն յաջողի հետզհետէ աւելի կատարելագործեալ հանդիսանալոյ այս աշխատութեան մէջ։

Գինն է քսան կոպ. և կվաճառուի յԱղէքսանդրապօլ հեղինակի մօտ և Վիճակային Դպրոցի գրատանը։

---

## ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՀԱՆԴԵՐՁ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ՆԱՀԱՆԳԻ.

---

Մայր Աթոռոյս տպարանէն լոյս տեսաւ Գեր. Աբէլ Արքեպիսկոպոս Մխիթարեանցի աշխատասիրած այս Պատմութիւնը, որ ինչպէս Վաղարշապատայ, նոյնպէս Այրարատեան աշխարհին լերանց, գետոց և այլոց և այլոց վերայ համառօտ և հետաքրքրական տեղեկութիւններ կպարունակէ։

Այս առթիւ Գեր. Աբէլ Արքեպիսկոպոս զանազան հեղինակաց Վաղարշապատայ և Այրարատեան աշխարհին վերայ երբեմն երբեմն գրած սխալ և թիւր կարծիքները բաղդատած և ի տեղիս տեղիս ուղղած է։

Գինն է յիսուն կոպ։

## Ք Ն Ա Ր

### ՄՇԵՑՒՈՑ ԵՒ ՎԱՆԵՑՒՈՑ·

*Մշոյ և Վանայ կողմեր մերազնեայց մէջ տիրած ազգային ոգւոյ և ընտանեկան և այլ յարաբերութեանց և զգացմանց վերայ մի գաղափար տալոյ նպատակաւ՝ Արժ. Արիստակէս վարդապետ Սեդրակեանց հաւաքած է նոցա ինչ ինչ երգերը այս գրքոյկի մէջ։*

*Գինն է Երեսուն կոպ։*

---

### Ընդ մամլով են

ԴԱՍԱԳԻՐՔ ԸՆԴՀ· ՊԱՏՄ· ՎԵՐՋԻՆ ԿԱՄ ՆՈՐ ԴԱՐՈՒՑ։

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՄՏԱՑ·